

Հայարփի Քեշիշյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի դասախոս
Էլ. հասցե՝ hayarpikeshishyan2018@gmail.com
DOI: 10.53614/18294952-2022.2-113

ԼԵԶՎԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽՆԱԿՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում արտացոլվում է լեզվի սերտ կապն իրավունքի հետ և միմյանց հետ փոխհարաբերությունը: Այդ փոխհարաբերությունը դիտվում է որպես մի համակարգ, որտեղ լեզուն իրավունքի արտահայտման ամենակարևոր գործիքն է, և լեզվի օգտագործումը վճռորոշ նշանակություն ունի ցանկացած իրավական համակարգի համար: Հիմնավորվում է թեմայի արդիականությունը, և մատնանշվում են այն խնդիրները, որոնց առջև կարող ենք կանգնել, եթե իրավունքի ոլորտում չկարևորենք լեզվի դերն ու նշանակությունը:

Լեզվի և իրավունքի խաչմերուկներում ծագած խնդիրները վաղուց արդեն գտնվում են մի շարք գիտնականների՝ թե՛ լեզվաբանների, թե՛ իրավաբանների հետաքրքրությունների շրջանակներում: Ուստի, հոդվածում դիտարկվում են թեմայի վերաբերյալ տարբեր լեզվաբանների և իրավաբանների ձևակերպումները:

Հոդվածում նաև առաջարկ է արվում ստեղծել նոր առարկա, որը կկոչվի «Իրավալեզվաբանություն», որի շրջանակներում «Իրավագիտության» ֆակուլտետի ուսանողները խորապես կուսումնասիրեն իրավաբանական լեզվաբանության հիմունքները և իրավաբանական տերմինները:

Հիմնաբառեր. լեզու, իրավունք, լեզվաբաններ, իրավաբաններ, իրավունքի լեզու, լեզվաբանական իրավունք, իրավալեզվաբանություն, իրավաբանական տերմին, փոխհարաբերություն:

Ներածություն

Դժվար է գտնել մեկ այլ գիտություն, որը կունենա այնպիսի բազմազան կապեր այլ գիտությունների հետ, ինչպիսին լեզվաբանությունն է: Դա բացատրվում է գիտության առարկայի՝ լեզվի առանձնահատկություններով:

Լեզուն ձայնային, բառապաշարի և քերականական միջոցների պատմականորեն հաստատված համակարգ է, որն օբյեկտիվացնում է մտածողության աշխատանքը և հանդիսանում է մարդկանց հաղորդակցության, մտքերի փոխանակման և փոխըմբռնման գործիք (Օжегов, Шведова, 1996, էջ 2306): Լեզուն հնարավոր է դարձնում մարդկային մշակույթի գոյությունն ու զարգացումը, այն նաև բոլոր գիտությունների գործիքն է, բոլոր բնագավառներում գիտական դիրքորոշումներն արտահայտելու միջոց: Ելնելով այս սահմանումներից՝ կարող ենք եզրակացնել, որ լեզուն պետք է հասկանալի լինի բոլոր մարդկանց՝ նրանց մտքերի փոխանակման, հաղորդակցության համար: Այնուամենայնիվ, կան մասնագիտացված լեզուներ, որոնք կենտրոնացած են որոշակի գործունեության մեջ ներգրավված մարդկանց որոշակի համեմատաբար նեղ շրջանակի վրա: Օրինակ, ցանկացած բնագավառի մասնագետ՝ լինի բժիշկ, պատմաբան, բանասեր, իրավագետ, ռազմագետ, և այլն, իր բառային ֆոնդում ունի որոշակի բառեր, տերմիններ, արտահայտություններ, որոնք անհասկանալի են տվյալ ոլորտում չաշխատող մասնագետի համար: Սա խոսում է ոչ միայն լեզվի բազմազանության մասին, այլ նաև նրա մասին, որ կյանքի ցանկացած ոլորտ ինչ-որ պահի կարող է անհասկանալի դառնալ շարքային քաղաքացիների համար: Սակայն գիտենք, որ բոլոր ոլորտներն էլ գործում են ի շահ հասարակության, ինչը նշանակում է, որ դրանք պետք է պարզ լինեն բոլորի համար: Իհարկե, անհնար է ողջ բնակչությանը սովորեցնել հասկանալ հասարակության բոլոր ոլորտների լեզուն: Օրինակ, բժիշկը չի հասկանա, թե ինչ է «միջուկային եռյակը», իսկ ռազմական ստրատեգը դժվար թե իմանա «իզոկլինոլին» բառի իմաստը, չնայած բժշկի համար այն ամենօրյա օգտագործվող սահմանում է:

Մասնագիտացված լեզվի օրինակ է նաև իրավունքի լեզուն: Այն չափազանց տարածված է և ղեկավարում է մարդկային կյանքի բոլոր ոլորտները: Ավելին, այն ամենահին մասնագիտացված լեզուներից է: Սա խոսում է ոչ միայն հասարակության կյանքի համար իրավական լեզվի կարևորության, այլև բազմաթիվ ժողովուրդների առօրյա հաղորդակցության լեզուների վրա դարերի ընթացքում դրա ազդեցության մասին:

Ֆրանսերենը տարբերակում է «լեզու»՝ որպես ամբողջական վիրտուալ սուբյեկտ (*langue*), օրինակ՝ անգլերենը, ֆրանսերենը, չինարենը և այլ լեզուներ, և «հատուկ լեզու», օրինակ՝ իրավունքի լեզուն (*langage du droit*), որը համարվում է օրենսդրական և կարգավորող ակտերի, վարչական որոշումների և դատարանների որոշումների լեզու (Elst, 1991, էջ 325):

Լեզուն էական դեր է խաղում թե՛ իրավունքի ստեղծման, թե՛ դրա կիրառման կարգավորման գործում: Իրավական հասկացություններն ու նորմերը կարող են արտահայտվել միայն լեզվով: Լեզուն օրենսդրական գործունեության միջոց է: Այն օրենքի կիրառման միջոց և/կամ օբյեկտ է. օրենքների և

այլ իրավական տեսքերի մեկնաբանում, հետաքննության և արդարադատության իրականացում (դատարանի որոշումներ, ցուցումներ, հայցեր, արձանագրություններ, փաստաբանների ելույթներ և այլն):

Իրավունքը մի մասնիկն է մարդկանցով լի իրական աշխարհի, ուր մարդիկ ապրում են, շփվում և հաղորդակցվում միմյանց հետ: Իրավունքն իր ծագմամբ սերտորեն փոխկապակցված է լեզվին, այն առարկայանում է լեզվում և ճանաչվում լեզվի միջոցով: Իրավագիտության մեջ իրավունքը սահմանվում է որպես հանրալեզվաբանական հաղորդակցման հատուկ ձև (Այվազյան, 2017, էջ 9): Իրավունքը համարվում է և՛ որպես առանձնահատուկ սոցիալական լեզու, և՛ որպես սոցիալական փոխներագուման բազմակողմանի, համընդհանուր միջոց, որն իրենից ներկայացնում է իրավական հաղորդակցման հաճախակի վերարտադրման գործընթաց:

Որպես առանձին սոցիալական ինստիտուտներ՝ լեզուն և իրավունքը Եվրոպայում ուսումնասիրվել են երկար ժամանակ և առավել մանրամասնորեն: Սակայն օբյեկտիվ իրականությունը ստիպել է փոխել ուսումնասիրության հեռանկարը և ուշադրություն դարձնել դրանց փոխհարաբերությանը: Ըստ էության, խոսքը լեզվի և իրավունքի սերտաձման մասին է՝ որպես ուսումնասիրության մեկ օբյեկտ:

Թիերսման (1986) հող նախապատրաստեց իրավունքի և լեզվի միջև փոխգործակցության պաշտոնականացման համար՝ նշելով. «Լեզուն և իրավունքը փոխազդում են մի շարք ձևերով, որոնցից ամենաակնհայտն այն է, որ օրենքներն արտահայտվում են լեզվով» (Tiersman, էջ 189):

Մերքը իր էսսեում նշում է, որ «գիտնականները, ովքեր ուսումնասիրում են իրավունքի սոցիալական սահմանադրությունը, գնալով ավելի են գնահատում լեզվի կարևորությունը իրավական գործընթացներում» (Mertz, 1992թ.):

Լեզվի և իրավունքի փոխհարաբերության հարցը հետաքրքրում է ինչպես իրավաբաններին, այնպես էլ լեզվաբաններին: Գերմանացի լեզվաբան Ռայներ Արնցի (2001) կարծիքով՝ լեզուն իրավաբանի միակ «աշխատանքային գործիքն է», գործիք, որը պետք է լավ հարմարեցվի «աշխատանքային նյութի» հետ աշխատելու համար, այսինքն՝ իրավահարաբերությունների համակարգի հետ՝ դրա գործունեությունն ապահովելու համար (Arntz, էջ 420):

Բեռլին-Բրանդենբուրգի գիտությունների ակադեմիայի իրավունքի լեզվի ուսումնասիրման հետազոտական խումբը՝ առանձնացնում է իրավունքի և լեզվի փոխհարաբերությունների ուսումնասիրության մի քանի ոլորտ: Առաջին ուղղությունը դատարանում շփումն է: Այս հայեցակարգը պետք է հասկանալ որպես դատավարության կողմերի լեզվական վարքագիծ: Այս ուղ-

1 Իրավաբանական լեզվաբանության Հայդելբերգի խումբը իրավական հաղորդակցության ուսումնասիրման միջառարկայական հետազոտական խումբ է: Այն նախաձեռնել և 1983 թվականին հիմնադրել են լեզվաբաններ և իրավաբաններ Ռայներ Վիմերը (Տրիեր), Ֆրիդրիխ Մյուլերը (Հայդելբերգ), Դիտրիխ Բուսեն (Դյուսելդորֆ), Ռալֆ Քրիստենսենը (Մանհայմ), Միխայել Սոկոլովսկին (Մանհայմ) և Բերնդ Ժանհեյրը (Մանհայմ): Խումբի նպատակն է նպաստել իրավունքի և լեզվի միջդիսցիպլինար հետազոտություններին: Խումբը գրանցված միավորում է: Հիմնադրման օրվանից Հայդելբերգի խումբը զգալի ազդեցություն է ունեցել գերմանալեզու երկրներում լեզվի և իրավունքի հետազոտությունների վրա և դրանց վերաբերյալ թողարկել է կարևոր հիմնարար աշխատություններ:

ղությունը ներառում է ոչ միայն տեքստերի ոճաբանության, հոետորաբանության, քերականության և լեզվաբանության հարցերը, այլ նաև լեզվական այնպիսի ասպեկտներն, ինչպիսիք են գործընթացին մասնակցող կողմերի խոսքի բարբառային և սոցիալական տարբերությունները: Երկրորդ ուղղությունը իրավական փաստարկն է, որը ներառում է ապացույցների և փաստարկների արտահայտումը բնական լեզվով, այսինքն՝ իրավական տրամաբանության դիտարկումը լեզվի հատկությունների պրիզմայով: Երրորդ ասպեկտը դատական լեզվաբանությունն է. դատական պրակտիկայում կիրառվող իրավունքի դատական մեկնաբանման և վերլուծական մեթոդները հիմնված են լեզվաբանության օրենքների վրա: Բացի այդ, որպես առանձին ոլորտ, նրանք առանձնացնում են լեզվական պահանջները իրավական ձևակերպումների համար, դրանք են՝ լեզվական գործողությունների իրավական ուժը և լեզվական նորմերը օրենքում, տեքստերի մեկնաբանման չափանիշները, իրավական ձևակերպումների լեզվական խստությունը և այլն:

Մեթոդաբանական և տեսական հիմքերը

Հաշվի առնելով հողվածի հետ առնչվող հարցերն ու խնդիրները՝ հետազոտության համար մեթոդաբանական և տեսական հիմք են հանդիսացել տարբեր երկրների ու տարբեր ժամանակների ականավոր լեզվաբանների և իրավաբանների ուսումնասիրությունները, տեսական դատողություններն ու ձևակերպումները, գիտական գրականության մշակումները, ամսագրերի և տարբեր հոդվածների նյութերը, ինչպես նաև համապատասխան ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական փաստաթղթերը: Խնդրո առարկան հետազոտվել է նաև իրավահամեմատական, լեզվահամեմատական, հարցման և այլ մեթոդների կիրառմամբ:

Արդյունքներ և քննարկում

Լեզվական նորմերի և օրենքների մանրամասն և պարտադիր իմացությունը, անշուշտ, լեզվաբանի գործն է, սակայն լեզվական որոշակի կանոնների, լեզվամիջոցների գործառական հնարավորությունների իմացությունը և առհասարակ հայերենի լեզվական մշակույթին բավարար չափով տիրապետելը կարևոր նախապայմաններ են իրավաբանական գրագրությունը պատշաճ կազմակերպելու համար:

ԱՄՆ Գերագույն դատարանը սահմանում է. «Օրենքի մեկնաբանումը մենք սկսում ենք՝ համաձայն օրենսդրական կառուցակարգի այն հայտնի կանոնի, որ օրենքի մեկնաբանության ելակետը հենց օրենքի լեզուն է: Եթե այդ լեզուն բավականաչափ հստակ է, և օրենսդրի նպատակը պարզ երևում է օրենքից, ապա օրենքի տառին համապատասխանող այդ մեկնաբանությունը համարվում է վերջնական: ... Դատարանը առաջին հերթին պետք է ենթադրի, որ օրենսդիր մարմինը սահմանել է օրենքով այն, ինչ ինքն իրականում նկատի ունի... » (Consumer Product Safety Commission et al. v. GTE Sylvania, 1980, Connecticut Nat'l Bank v. Germain, 1992):

Օրենքը պետական իշխանության կողմից հաստատված և պաշտպանված նորմերի և կանոնների մի շարք է, որը կարգավորում է հասարակության մեջ մարդկանց հարաբերությունները, ինչպես նաև գիտություն, որն ուսումնասիրում է այդ նորմերը (Օжегов, Шведова, 1996, էջ 566): Քանի որ օրենքն անմիջական կապ ունի հասարակության հետ, ավելի ճիշտ՝ կարգավորում է նրա հարաբերությունները, օրենսդրական տեքստի հասցեատեր են այն երկրի քաղաքացիները, որտեղ ընդունվում է օրենքը, ներունակորեն այն նախատեսված է բոլոր քաղաքացիների համար, այդուհանդերձ հարկ է նկատի ունենալ, որ օրենքի լեզուն պետք է մատչելի և հասկանալի լինի հենց այդ հասարակության անդամների համար: Ի վերջո, գաղափար չունենալով, թե ինչ է մարդուն թելադրում օրենքը, չհասկանալով կարգավորող իրավական ակտերում արտացոլված նորմերը, մարդը չի իմանա, թե ինչ է իրեն թույլ տալիս, ինչն է անցանկալի, ինչն է խստիվ արգելվում, ուստի կսկսի հետևել իր անձնական կամքին, որը մի շարք դեպքերում կարող է հանգեցնել հանցագործությունների և երկրում հանցավոր իրավիճակի վատթարացման: Հետևաբար, օրենքը պետք է հնարավորինս մոտ լինի ժողովրդին, իսկ օրենքի լեզուն պետք է կազմված լինի երեք տարրերից՝ ճշգրտություն, հուսալիություն և հստակություն:

Իրավալեզվաբանության հասկացության մասին

Լեզվի և իրավունքի փոխհարաբերությունն ուսումնասիրում է իրավալեզվաբանությունը: Լեզուն և իրավունքը իրավալեզվաբանության մեկ օբյեկտ են:

Իրավաբանական լեզվաբանությունը կամ իրավալեզվաբանությունը², որպես առանձին գիտություն, զարգացել է ոչ վաղ անցյալում, սակայն այս ուղղությունը մի քանի դար շարունակ գրավել է մարդկության հետաքրքրությունը: Իրավալեզվաբանությունը լեզվաբանության մեջ նոր, առավել քիչ ուսումնասիրված ոլորտ է, չնայած այն հանգամանքին, որ իրավունքի և լեզվի ուսումնասիրությանը զբաղվում են և՛ իրավաբանները, և՛ լեզվաբանները: Այն ընկած է լեզվաբանության և իրավաբանության միջև և կրում է միջգիտակարգային (միջառարկայական) բնույթ: Իրավալեզվաբանության առաջացման անհրաժեշտությունը ծագում է լեզվական նորմի և իրավական նորմի հարաբերակցությունից և այն իրադրություններից, որտեղ այս երկու նորմերը հարաբերվում են:

Իրավալեզվաբանությունն հասկացությունն առաջին անգամ ձևակերպվել է 1976 թվականին գերմանացի լեզվաբան Ադալբերտ Պոդլեխի կողմից (Podlech, 1976, էջ 105–116): Նա իրավաբանական լեզվաբանությունը համարել է «հետազոտության բոլոր մեթոդների և արդյունքների ամբողջություն, որը վերաբերում է լեզվի և իրավական նորմերի փոխհարաբերությունների

2 Բացի «իրավաբանական լեզվաբանություն» և «իրավալեզվաբանություն» տերմիններից, գրականության մեջ լայնորեն կիրառվում են նաև հետևյալ անվանումները՝ լեզվաբանական իրավագիտություն, իրավական լեզվաբանություն, դատական լեզվաբանություն, լեզվաքրեականություն, դատական խոսքի գիտություն, իրավական քերականություն և այլն:

խնդիրներին և համապատասխանում է ժամանակակից լեզվաբանության պահանջներին»: Իր գոյության ընթացքում այս գիտությունը զգալիորեն ընդլայնել է իր ըմբռնումների շրջանակը, քանի որ վերջին կես դարը բնութագրվում է ինչպես տեխնիկական, այնպես էլ հումանիտար գիտությունների զարգացման կտրուկ թռիչքով: Լեզվաբանության՝ որպես ինքնուրույն գիտության չափանիշներն ու պահանջները մեծապես փոխվել են: Արդյունքում, իրավագիտությունը և լեզվաբանությունը հասել են որակապես նոր մակարդակի, և նրանց հարաբերություններն արագորեն ընդլայնվում են: Հարկ է նշել, որ փոփոխություններ են տեղի ունեցել ոչ միայն իրավական ոլորտում լեզվաբանական խնդիրների ուսումնասիրության, այլև այս ոլորտում լեզվաբանական ուսումնասիրությունների դերում. այն զգալիորեն աճել է:

Ներկայումս իրավալեզվաբանությունը կոչված է լուծելու ցանկացած խնդիր լեզվաիրավական հարթության մեջ, ինչպես օրինակ՝ լեզվական կոնֆլիկտների իրավական կարգավորման սկզբունքները, իրավաբանական լեզվի մշակումը (օրենքի լեզուն), օրենքների և այլ իրավական ակտերի տեքստերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ստեղծումը, բնակչության լեզվաիրավական իրազեկությունը, իրավաբանների լեզվական կրթությունը, լեզվաիրավական գիտակցության ուսումնասիրությունը, իրավական փաստաթղթերի լեզվական փորձաքննությունը և այլն: Սրանք իրավալեզվաբանության գլխավոր, բայց ոչ ամբողջական խնդիրներն են, չնայած, նույնիսկ նշվածները բավական են հասկանալու համար, որ այս գիտության ծավալը բավականին լայն է և այսօր նրա նշանակությունն արդարացիորեն մեծ է (Կարապետյան, 2019, էջ 23):

Անդրադառնալով իրավունքի լեզվի առանձնահատկություններին՝ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ իրավական փաստաթղթերը կազմված են պաշտոնական խոսքի ոճով, դրանք չեն պարունակում որևէ հուզական և զգացմունքային դրսևորումներ: Հետևաբար, իրավունքի լեզուն հատուկ լեզու է, որում իրացվում է բառապաշարի հատուկ տերմինաբանական նշանակությունը: Իրավունքի լեզուն նախատեսված է անհատի կողմից տեղեկատվության տրամաբանական ընկալման համար: Այդ իսկ պատճառով իրավական ակտերում իրականությունն արտացոլելու գեղարվեստական միջոցներ չկան: Ահա թե ինչու իրավունքի լեզուն ճշգրիտ է, հակիրճ և հասկանալի: Նման եզրակացության են եկել նաև իրավալեզվաբանության հետազոտողները, քանի որ նորմատիվ ակտերում ամրագրված իրավունքն առաջին հերթին արտահայտում է ժողովրդի կամքը, այդ պատճառով այդ ակտերը պետք է անբասիր լինեն ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել գործող իրավական ակտերը և բացահայտել դրանց առավելություններն ու թերությունները: Իրավական փաստաթուղթ կազմելիս օրենսդիրը պետք է խուսափի երկար արտահայտություններից, բազմաթիվ լրացումներից ու կրկնություններից, աշխատի նյութը ներկայացնել առանց ավելորդ շեղումների և ավելորդ ենթաբաժինների բաժանելու:

Իրավունքի լեզուն ներառում է ոչ միայն բացառապես իրավունքի ոլոր-

տում օգտագործվող տերմինները և մասնագիտական բառապաշարը (պրոֆեսիոնալիզմները), այլև առօրյա կյանքից յուրաքանչյուրին ծանոթ բառեր: Իրավաբանական տերմիններն առավել հաճախ օգտագործվում են իրավունքի տարբեր ճյուղերի նորմատիվ իրավական ակտերում, կոնկրետ իրավական երևույթի մեկնաբանության կամ իրավական իրավիճակի մանրամասն վերլուծության մեջ: Առօրյա տերմիններն իրենց հերթին օգտագործվում են փաստացի իրավիճակների հետ ընդհանուր կապ ունեցող հարցերում:

Ռայներ Արնցը (2001) ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ իրավաբանների և ոչ իրավաբանների միջև իրավական և վարչական դաշտում խնդիրների ըմբռնման պատճառները ոչ թե բառապաշարի և լեզվական կառուցվածքի մեջ են, այլ հատուկ իրավական հայեցակարգային հարաբերությունների վերացականության մեջ (Arntz, էջ 289):

Սակայն մեկ այլ դժվարություն է առաջացնում այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում մարդկանց գիտակցությունը փոխվում է: Անցած սերնդի մտածելակերպը կարող է անհասկանալի լինել ներկայի համար, իսկ ներկան՝ ապագային: Ստացվում է, որ իրավունքի լեզուն նույնպես չպետք է անփոփոխ մնա: Իրար փոխարինող իրավական ակտերը պետք է փոխակերպվեն ոչ միայն իրենց իմաստով, այլև նոր նորմերի արտահայտման տեսքով, քանի որ ժամանակի ընթացքում որոշ բառեր հնանում են և դրանք փոխարինվում են բոլորովին նորերով: Սակայն այն դեպքում, երբ յուրաքանչյուր նոր ժամանակահատվածում փորձենք կատարելագործել իրավունքի լեզուն, ի վերջո հնարավոր է այս լեզուն վերածել արհեստական կոնստրուկցիաների մի ամբողջության՝ ամբողջովին անջատված մարդկանց իրական կյանքից:

Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է: Սա նշանակում է, որ երկրում կյանքի բոլոր ոլորտներում առկա է իրավունքի դաշտը՝ շատ դեպքերում արտահայտված օրենքով, այսինքն՝ նորմատիվ իրավական ակտերով: Այս առումով մեծանում է ակտում ամրագրված նորմի ձիշտ ներկայացման կարևորությունը, քանի որ այն ուղղված է առաջին հերթին ժողովրդին, որը ոչ միայն պետք է իմանա նորմը, այլև հասկանա այն: Սակայն ոչ բոլորն ունեն իրավաբանական կրթություն, և հետևաբար, ոչ բոլորն են կարողանում հասկանալ իրավական լեզվով գրված նորմը:

Դեռևս 2002թ. ընդունված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (36-րդ հոդվածի 2-րդ մաս) սահմանում էր՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի ճշգրիտ, հստակ և մատչելի: Հետագա տասնամյակում օրենքը փոփոխվել է: 2018թ. ընդունված և ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նշված կետը դուրս է մղվել: Անկախ այս հանգամանքից՝ իրավաբանական տեքստի համար ճշգրտությունը, հստակությունն ու մատչելիությունը միշտ էլ պարտադիր որակներ են. խոսքի այս տեսակը պետք է հասկանալի լինի «սովորական» քաղաքացու և արհեստավարժ փաստաբանի համար: Հետևաբար, իրավական գրագրության մեջ կարևոր են ոչ միայն հաղորդվող նյութի բովանդակությունը, փաստերն ու փաստարկումները, ձևավորումը, այլև շա-

րադրելու մշակույթը, լեզվական անհրաժեշտ միջոցների ու ձևերի նպատակային ընտրությունը (Ավետիսյան, Մկրտչյան, Սարգսյան, 2019, էջ 24):

Պետության կողմից կարգավորվող իրավական նորմերի արդյունավետությունը ուղղակիորեն կախված է դրանց իրական բովանդակությունից: Այն կանոնները, որոնք գրված են պետության քաղաքացիների համար հասկանալի լեզվով, ավելի արդյունավետ են, քան խիստ օրինական լեզվով գրվածները, որտեղ օգտագործված են նեղ մասնագիտական տերմիններ: Թեև օրենքի անտեղյակությունը արդարացում չէ, սակայն պետք է հասկանալ իրավական նյութերի ճշգրիտ և հստակ ներկայացման կարևորությունը: Ավելին, իրավունքի ոլորտի մասնագետները՝ իրավաբանները, պետք է ունենան իրավունքի լեզուն օգտագործելու հմտություններ՝ քաղաքացիներին իրենց իրավունքներն ու պարտականությունները ճիշտ ներկայացնելու և բացատրելու համար: Արձանագրվել են դեպքեր, երբ իրավաբանները, բացարձակապես չտիրապետելով առօրյա հայերենին, առավել ևս՝ իրավունքի լեզվին, իրավական փաստաթղթերում թույլ են տվել կոպիտ սխալներ: Անկասկած, որակյալ մասնագետի համար նման իրավիճակն անընդունելի է: Դեռ 19-20-րդ դարերում իրավաբաններին, որոնք համարվում էին հասարակության բացառիկ խելացի շերտ, հարգում էին երկրի բնակչության մյուս բոլոր շերտերը: Իսկ այն, որ ժամանակակից Հայաստանում իրավաբանը կարող է իրեն թույլ տալ կոպիտ ուղղագրական և ոճական սխալներ, հուշում է, որ բնակչության գրագիտության մակարդակը ցանկալիից ցածր է:

Ուսումնասիրողների մեծ մասը համաձայն է, որ իրավունքի լեզուն կատարյալ չէ, այն բարելավումներ և փոփոխություններ է պահանջում: Սակայն հասկանալու համար, թե որ ուղղությամբ է պետք կատարելագործել այս գիտությունը, ուսումնասիրողները պետք է մասնագիտացված լինեն ոչ միայն լեզվաբանության, այլ նաև իրավագիտության բնագավառում. պետք է հավասարապես կենտրոնանան իրավական և լեզվական ասպեկտների վրա:

«Ակնհայտ է, որ կոնկրետ բարձրագույն ուսումնական հաստատությունում ակադեմիական առարկաների համակարգի բովանդակության հարցը կախված է ոչ միայն ճյուղային իրավաբանական գիտությունների քանակից, այլև ուսումնական հաստատության պրոֆիլից և մակարդակից», – ասում է Ռ. Խ. Մակուևը (Makuev, 2005, էջ 61): Ըստ նրա՝ պետք է նաև հստակեցվի, թե իրավաբանական լեզվաբանության որ ասպեկտները պետք է ուսումնասիրի իրավագիտության ոլորտի ապագա մասնագետը: Եվ նրա կարծիքով՝ յուրաքանչյուր իրավաբանի համար մասնագիտական և գրավոր խոսքին / օրենսդրական ակտերը – կանոնակարգ, հրաման, օրենք, մեղադրական ակտ, դատական օրենսգիրք և գործընթացային ակտերը – որոշում, վճիռ, դատավճիռ, ձերբակալման օրդեր (հրաման), դատական նիստի արձանագրություն, բողոքարկում, հակահայց և այլն/, և բանավոր խոսքին /իրավաբանական խորհրդատվությունը, վկաների հարցաքննումը, խաչաձև հարցաքննությունը, մինչդատական քրեական վարույթը, դատաքննությունը, դատական խոսքը, երդման բերելը, դատարանում մեղադրանքի պաշտպանությունը և այլն/ տիրապետելն անհրաժեշտություն է, բացի այդ, նա պետք

է ստանա գիտելիքներ նաև իրավական տերմինաբանության ոլորտում, ուսումնասիրի իրավական լեզվի առանձնահատկությունները:

Խնդրին մասնակիորեն լուծում է տրվել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով (8-րդ հոդվածի 2-րդ մասի 2¹ -րդ կետ), որտեղ նշվում է, որ անկախ մասնագիտությունից՝ հայոց լեզու առարկայի ուսուցումը բարձրագույն ուսումնական հաստատություններում պարտադիր է: Խնդրի լուծումը կարելի է գտնել նաև ուսումնական հաստատություններում դասավանդվող առարկաների մակարդակի բարձրացման և ապագա մասնագետների կրթության մակարդակի բարձրացման մեջ, այսինքն, ճիշտ կլինի, եթե իրավաբանական կրթության մեջ անպայման ներառեն իրավական լեզվաբանության առարկաներ:

Եզրակացություն

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լեզվի դերը մեծ է իրավունքի ոլորտում, քանի որ լեզվի միջոցով է ստեղծվում իրավական ինստիտուտը, և լեզվական գիտելիքները կարող են նպաստել իրավունքի էության մեր ըմբռնմանը: Եվ գրավոր, և՛ բանավոր լեզուն անփոխարինելի են իրավական գործընթացի համար:

Հետազոտության խնդրի ամբողջական լուծման համար առաջարկվում է ստեղծել նոր առարկա՝ «Իրավալեզվաբանություն» անվամբ, որն իր մեջ կներառի նաև դատական հռետորաբանություն և իրավական տերմինաբանություն առարկաները, և այն պարտադիր ներառել բուհերի «Իրավագիտության» ֆակուլտետի ուսումնական ծրագրում, քանզի անհրաժեշտ է իրավաբանական լեզվաբանության հիմունքները դասավանդել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ի վերջո, առանց իրավաբանական տերմինների իմացության, դժվար է հասկանալ իրավական ուղղության այլ առարկաներ՝ կապված պատմաիրավական ցիկլի, ճյուղային և հատուկ իրավաբանական գիտությունների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

- Այվազյան, Ա. (2017) Լեզվաոճական հնարքների դերը իրավունքի լեզվում/ *Օլորա լեզուները մասնագիտական նպատակների համար*, ԵՊՀ հրատարակչություն: № 5(14), էջեր 8-20:
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք [RA law on higher and post-graduate professional education], ընդունված՝ 2004թ-ի դեկտեմբերի 14-ին: ՀՀՊՏ 2005.01.31/8(380) Հոդ.159
- Կարապետյան, Մ. (2019) Իրավալեզվաբանությունը որպես միջգիտակարգային գիտություն/ *Օլորա լեզուները մասնագիտական նպատակների համար*, ԵՊՀ հրատարակչություն: № 7(16), էջեր 19-27:
- Ավետիսյան, Յու., Մկրտչյան, Ա., Սարգսյան, Լ. (2019) *Իրավաբանական գրագրության լեզուն*: Եր., ԵՊՀ հրատ.:
- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2002 թվականի ապրիլի 3-ին:

- Ուժը կորցրել է 2018 թվականի ապրիլի 7-ին ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ.344 «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2018 թվականի մարտի 21-ին ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373
- Макуев, Р.Х. (2005). *Теория государства и права: учебник* // Р. Х.Макуев. – 2-е изд., испр. и доп. – Орел: ОРАГС, 685 էջ:
- Ожегов, С. И., Шведова, Н. Ю. (1996). *Толковый словарь русского языка*. Азб. М.
- Arntz, Reiner (2001). *Fachbezogene Mehrsprachigkeit in Recht und Technik*. Hildesheim, Zürich, New York: Georg Olms Verlag.
- Consumer Product Safety Commission et al. v. GTE Sylvania, Inc. et al.*, 447 U.S. 102 (1980) <https://supreme.justia.com/cases/federal/us/447/102/>
- Connecticut Nat'l Bank v. Germain*, 112 S. Ct. 1146, 1149 (1992) <https://supreme.justia.com/cases/federal/us/503/249/>
- Mertz, E. (1986). *Linguistic Ideology and Praxis in U.S. Law School Classrooms*, Pragmatics, ISSN 1018–2101.
- Podlech A. *Rechtslinguistik* // Grimm, Dieter (Hrg.). *Rechtswissenschaft und Nachbarwissenschaften*. Munchen: Beck, 1976. Bd. II. S. 105–116.
- Elst, Raymond Vander (1991). *Essai de synthèse/Le langage du droit*, sous la direction de Leon Ingber. – Bruxelles: Editions Nemesis.
- Tiersman, P. (1986). *The Language of Offer and Acceptance: Speech Acts and the Question of Intent*, California Law Review, Vol., էջեր 74–189:

References

- Ayvazyan, A. (2017) *Lezvavochakan hnarqneri dery iravunqi lezvum* [The role of linguistic tricks in the language of law]. Otar lezunery masnagitakan npatakneri hamar, YePH hratarakch`ut`yun: № 5(14), eger 8–20. (In Arm.)
- «Bardzraguyn yev hetbuhakan masnagitakan krtutyany masin» HH orenq, yndunvats` 2004t`-i dektemberi 14-in. HHPT 2005.01.31/8(380) Hod.159 (In Arm.)
- Karapetyan, M. (2019) *Iravalezvabanutyuny vorpes mijgitakargayin gitutyany* [Legal linguistics as an interdisciplinary science]. Otar lezunery masnagitakan npatakneri hamar, YePH hratarakch`ut`yun, № 7(16), eger 19–27: (In Arm.)
- Avetisyan, Yu., Mkrtchyan, A., Sargsyan, L. (2019) *Iravabanakan gragrutyany lezun* [The language of legal writing]. Er., YSU ed.: (In Arm.)
- «Iravakan akteri masin» HH orenq [RA Law “On Normative Legal Acts”], yndunvats` 2002 t`vakani aprili 3-in: Uzhy korts`rel e 2018 t`vakani aprili 7-in HHPT 2002.05.21/15(190) Hod.344 (In Arm.)
- «Normativ iravakan akteri masin» HH orenq [“On Normative Legal Acts” Law of the Republic of Armenia], yndunvats` 2018 t`vakani marti 21-in HHPT 2018.03.28/23(1381) Hod.373 (In Arm.)
- Makuyev, R.Kh. (2005). *Teoriya gosudarstva i prava: uchebnyk* [Theory of state and law: textbook] // R. KH. Makuyev. – 2-ye izd., ispr. i dop. – Orel: ORAGS, 685 էջ: (In Rus.)
- Ozhegov, S. I., Shvedova, N. YU. (1996). *Tolkovyy slovar` russkogo yazyka* [Explanatory dictionary of the Russian language]. Az'. M. (In Rus.)

- Arntz, Reiner (2001). *Fachbezogene Mehrsprachigkeit in Recht und Technik*. Hildesheim, Zürich, New York: Georg Olms Verlag. (In Gem.)
- Consumer Product Safety Commission et al. v. GTE Sylvania, Inc. et al.*, 447 U.S. 102 (1980) <https://supreme.justia.com/cases/federal/us/447/102/> (In Eng.)
- Connecticut Nat'l Bank v. Germain*, 112 S. Ct. 1146, 1149 (1992) <https://supreme.justia.com/cases/federal/us/503/249/> (In Eng.)
- Mertz, E. (1986). *Linguistic Ideology and Praxis in U.S. Law School Classrooms*, Pragmatics, ISSN 1018-2101. (In Eng.)
- Podlech A. *Rechtlinguistik* // Grimm, Dieter (Hrg.). *Rechtswissenschaft und Nachbarwissenschaften*. Munchen: Beck, 1976. Bd. II. S. 105-116. (In Gem.)
- Elst, Raymond Vander (1991). *Essai de synthèse/Le langage du droit*, sous la direction de Leon Ingber. – Bruxelles: Editions Nemesis. (In Frac.)
- Tiersman, P. (1986). *The Language of Offer and Acceptance: Speech Acts and the Question of Intent*, California Law Review, Vol., pp. 74-189: (In Eng.)

Այարփի Կեփիշյան

Преподаватель учебного центра

Образовательного комплекса Полиции РА

Эл.адрес: hayarpikeshishyan2018@gmail.com

ВЗАИМОСВЯЗЬ ЯЗЫКА И ПРАВА

В статье отражена тесная связь языка и права и их взаимосвязь друг с другом. Эти отношения рассматриваются как система, в которой язык является наиболее важным инструментом для выражения права, а использование языка имеет решающее значение для любой правовой системы. Обосновывается актуальность темы и указываются проблемы, с которыми мы можем столкнуться, если не будем учитывать роль и значение языка в сфере права.

Проблемы, возникающие на стыке языка и права, давно интересовали ряд ученых, как лингвистов, так и юристов. Поэтому в статье рассматриваются формулировки разных лингвистов и юристов по данному вопросу.

В статье также предлагается создать новый предмет, который будет называться «Юридическая лингвистика», в рамках которого студенты факультета «Правоведение» будут углубленно изучать основы юридического языкознания и юридические термины.

Ключевые слова: язык, право, лингвисты, юристы, язык права, лингвистическое право, юридическая лингвистика, юридический термин, отношения.

Hayarpi Keshishyan

Lecturer of the training center of the RA Police Educational Complex

Email: hayarpikeshishyan2018@gmail.com

THE INTERRELATION BETWEEN LANGUAGE AND LAW

The article reflects the close relationship between language and law and their interrelation. That interrelation is seen as a system in which language is the most important tool for expressing law, and the use of language is crucial to any legal system. The modernity of the topic is substantiated, and the problems we may face if we do not consider the role and importance of language in the field of law are pointed out.

The problems arising at the intersections of language and law have long interested a number of scholars, both linguists and lawyers. Therefore, the article considers formulations of different linguists and lawyers on the subject.

The article also proposes to create a new subject, which will be called “Legal Linguistics”, within which students of the Department of Law will deeply study the basics of legal linguistics and legal terms.

Key words: language, law, linguists, lawyers, language of law, linguistic law, legal linguistics, legal term, interrelation.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2022թ. հունիսի 6-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2022թ սեպտեմբերի 30-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2022թ. հոկտեմբերի 18-ին: